ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մարտի 2014 թվականի N38-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԱՃԱՆԱՆ, ԹԱՆԱՀԱՏ, ԻՇԽԱՆԱՍԱՐ ՈՒ ՕԽՏԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի «2014 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» N140-Ա որոշման 1-ին կետի, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքային և Աճանան, Թանահատ ու Օխտար գյուղական համայնքներում համայնքի ղեկավարի, իսկ Իշխանասար գյուղական համայնքում համայնքի ավագանու հերթական ընտրությունները նշանակել 2014 թվականի հունիսի 8-ին:
2. Ընդունել ի գիտություն, որ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Թանահատ գյուղական համայնքի գործող ղեկավարի լիազորությունների ավարտման օրն է 2014 թվականի հունիսի 14-ը, Գորիս քաղաքային համայնքի գործող ղեկավարի լիազորությունների ավարտման օրն է 2014 թվականի հուլիսի 20-ը, իսկ Աճանան ու Օխտար գյուղական համայնքների գործող ղեկավարների և Իշխանասար գյուղական համայնքի գործող ավագանու լիազորությունների ավարտման օրն է 2014 թվականի օգոստոսի 3-ը:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2014թ. մարտի 19
ք. Կապան